# Դաս 8. Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական

Լրացուցիչ նյութ

## Արցախի զինանշանը

*Արցախի զինանշանը բնութագրում է արցախցու անկախ ու հպարտ ոգին, նրա սպեղծարար աշխատանքն ու բնավորությունը: Զինանշանի հեղինակը Լավրենտ Ղալայանն է:*

*Զինանշանն իր գաղտնիքներն ունի: Արծվի տարածված թևերի եզրերը վերածվում են զարդաքանդակի: Ըստ Ղալայանի՝ դրանք հայերենի 6 ձայնավորներն են, իսկ փռված թևերի ստորին հատվածն այլ բան է հուշում. «Թվում է, թե փետուրներ են, բայց դրանք սրեր են...»: Արծվի ճիշտ գլխավերևում Արտաշեսյան հարստության՝ Տիգրան Մեծի թագն է, որ խորհրդանշում է իր հավերժությունը, թագը մնայուն է, կրողները՝ անցնողներն են անցողիկ: Արծվի մագիլների տակ դարաբաղյան թութն է, խաղողը, ցորենի հասկերը: Լավրենտ Ղալայանը զինանշանի այս հատվածին երկակի իմաստ է հաղորդել. «Կարծես թե նրանք տակից արծվին են պահում, արծիվն էլ մագիլներով՝ իրենց»: Սա միասնության գաղափարն է:*